ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N: 415 -Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից թվով երեք դիմումների ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով դիմումատու քաղաքացիներին հատկացնել 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2024 թվականի <<13>> մարտի-ի N 415-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

N	Անուն, ազգանուն,	Հասցեն	Գումարի չափը /դրամ/
1	Կարինե Աղաջանյան	Քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց, տուն 21ա	20000 /քսան հազար/ դրամ
2	Ալմաստ Հարությունյան	Քաղաք Մարալիկ, Շիրազի փողոց, շենք 36, բնակարան 2	50000 /հիսուն հազար/ դրամ
3	Ֆիլիզ Մահորյան	Քաղաք Արթիկ, Տոնականյան փողոց, 2-րդ նրբանցք, տուն 23	100000 /մեկ հարյուր հազար/ դրամ
	Ընդամենը		170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ դրամ